ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 08 դեկտեմբերի 2020թ.

Նիստին մասնակցում էին Բյուրեղավան համայնքի ղեկավարի ղեկավարի 27.12.2017թ. N 06-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի նախագահ Հակոբ Բալասյանը, հանձնաժողովի անդամներ Շուշիկ Ասատրյանը, Կարինե Զոբանյանը:

Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Հակոբ Բալասյանը:

**Օրակարգում՝**

Հանձնաժողովի նախագահ Հակոբ Բալասյանը ներկայացրեց, որ Հայաստանի Հանապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարին կից համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի ու համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկված Հայկազ Խնկոյանը 2020 թվականի նոյեմբերի 11-ին մահացել է, որն էլ հիմք է հանդիսացել խորհրդակցական մարմինների կազմերից նրան հանելու համար:

Համաձայն համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 08-Ն որոշմամբ հաստատված կարգի IV բաժնի 17-րդ կետի 3-րդ ենթակետի *(ԽՄ-ների մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄ-ների անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից)*՝ քանի որ դիմում ներկայացրած անցանց ռեզերվում թեկնածուներ չկան, վերը նշված խորհրդակցական մարմինների կազմերում թեկնածուներ առաջադրելու մասին 2020 թվականի նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 7-ը ներառյալ նոր հայտարարություն է տրվել:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց, որ համայնքի ակտիվ բնակիչներ Հերմինե Խանգելդյանը և Նելի Խլոպուզյանը դիմում են նեկայացրել խորհրդակցական մարմիններին անդամակցելու համար:

**Առաջարկվեց**

Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի կազմում ընդգրկել Հերմինե Խանգելդյանին, իսկ համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սպորտի, սոցիալական (այդ թվում՝ երեխաների պաշտպանության) հարցերի խորհրդակցական մարմնի կազմում՝ Նելի Խլոպուզյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ Հակոբ Բալասյան

Հանձնաժողովի անդամներ՝ Շուշիկ Ասատրյան

Կարինե Զոբանյան